ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների քննարկման արդյունքների մասին

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.1.	ՀՀ ֆինանսների նախարարություն 25.06.2018թ. N 01/9-3/11402-18	1. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եվ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենքի Նախագիծ) 1-ին հոդվածով առաջարկվում է ՀՀ 2001 թվականի դեկտեմբերի 14-ի NՀՕ-276 օրենքը լրացնել 2.4-րդ հոդվածով, ինչպես նաև հաստատել 2018 թվականին Սևանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը՝ համաձայն N 5 հավելվածի: Մինչդեռ նշենք, որ ՀՀ 14.12.2001թ. NՀՕ-276 օրենքում արդեն իսկ առկա են վերոնշյալ հոդվածն ու N5 հավելվածը (փոփոխությունը կատարվել է 06.07.2017թ. N ՀՕ-116-Ն օրենքով): 2. Օրենքի Նախագծով առաջարկվում է 2018 թվականին Սևանա լճից բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 255 մլն մ^3՝ ՀՀ 2001 թվականի դեկտեմբերի 14-ի NՀՕ-276 օրենքով սահմանված 170 մլն մ^3-ի դիմաց: Դրա արդյունքում նախատեսվում է 2018 թվականի ընթացքում Սևանա լճից բացթողնվող ջրի՝ 170 մլն մ^3-ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի մոտ առաջացող լրացուցիչ գումարները վճարել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան բացված արտաբյուջետային հաշվին՝ այդ գումարների հավաքագրման և դրանց հաշվին Ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանած ուղղություններով նպատակային ներդրումների իրականացման համար: Այս առումով հստակեցման կարիք ունի Օրենքի նախագծին կից N5	Ընդունելի է:	Լրամշակվել է:

		հավելվածով ներկայացված Ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանած «լրացուցիչ գումարներ» հասկացությանը վերաբերվող դրույթները:		
1.2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 18.07.2018թ. N 01/9-3/13091-18	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծում նախատեսել նախաբան:	Ընդունվել է:	Լրամշակվել է:
		Ինչ վերաբերում է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության տրամադրմանը, ապա հայտնում ենք, որ ս.թ. ապրիլի 7-ից ուժի մեջ մտած Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, նորմատիվ իրավական ակտի նախագծերը ենթակա են կարգավորման ազդեցության գնահատման կառավարության սահմանած կարգով և դեպքերում, որոնք դեռևս սահմանված չեն:	Ընդունվել է ի գիտություն:	
2.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն 25.06.2018թ. N ԱԽ/ԱԲ-2/5598-18	Առարկություններ և առաջարկություններ չկան:		
3.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 25.06.2018թ. N 01/15.2/4084-18	Առաջարկություններ և դիտողություններ չկան:		
4.	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն 20.06.2018թ.	1) հոդված 1-ում՝ «2.4-րդ հոդվածով» և «N5 հավելվածի» բառերը համապատասխանաբար փոխել՝ «2.5-րդ հոդվածով» և «N6 հավելվածի» բառերով, 2) հոդված 3-ում «N5 հավելվածով» բառերը փոխել «N6 հավելվածով» բառերով:	Ընդունելի է:	Լրամշակվել է:

	N 01/19.1/3129-18			
5.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն 25.06.2018թ. N 1/18/7508-18	Նախագծի №5 հավելվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության մեջ ջրի դեֆիցիտի բերված արժեքը, եթե վերաբերում է Արփիլիճ, Ախուրյան, Ապարան, Մարմարիկ և Ազատի ջրամբարներին, ապա այն կազմել է 142.45 մլն մ^3 և ոչ թե 155 մլն մ^3:	Պարզաբանում	Նախագծում բերված է միայն Սևան-Հրազդան ոռոգման համակարգի դիֆիցիտը:
		Նույն պարբերության մեջ բերված է, որ Հրազդան գետի ջրատվությունը հուլիս-սեպտեմբեր ամիսներին ընդունվել է 110 մլն մ^3, ինչը ճշգրտման կարիք ունի, որովհետև 2016 թվականին այդ նույն ժամանակահատվածում Հրազդան գետի ջրատվությունը կազմել է 71.0մլն մ^3 (ըստ Հրազդան-Հրազդան և Հրազդան-Լուսակերտ ջրաչափական դիտակետերի տվյալների գումարի), ավելին, այդ մեծության առավելագույն արժեքը մինչև Մարմարիկի ջրամբարի կառուցումը կազմել է 84.0մլն^3 (1978թ.), իսկ բազմամյա միջին արժեքը՝ 56.2մլն մ^3: Այլ կերպ ասած Հրազդան գետի ջրատվությունը 2018թ. կանխատեսվում է բազմամյա միջին արժեքին մոտ և ավելի (60-62 մլն մ^3 սահմաններում):	Ընդունելի է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: <<Հայիդրոօդերևութաբանական և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն>> ՊՈԱԿ-ի տվյալների հիման վրա հաշվարկվել է ջրապահանջի դեֆիցիտ և այն կազմում է 75 մլն մ^3:

		Հավելվածի 2-րդ կետի վերջին պարբերության մեջ բերված արժեքներում կան անճշտություններ, ուստի առաջարկում եմ այդ պաբերությունը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սևանա լճից, առ հունիսի 15-ը ներառյալ, 2016 թվականին բաց է թողնվել 8.978 մլն մ^3, 2017 թվականին՝ 52.231 մլն մ^3 և 2018 թվականին՝ 27.268 մլն մ^3 ջուր, իսկ Արփա-Սևան թունելով (ներառյալ ստորերկրյա ներհոսքը) Սևանա լիճ է տեղափոխվել համապատասխանաբար 2016 թվականին 94.341 մլն մ^3, 2017 թվականին 87.876 մլն մ^3 և 2018 թվականին 111.121 մլն մ^3 ջուր»:	Ընդունելի է:	Լրամշակվել է:
		Միաժամանակ 2018 թվականին Սևանա լճից ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակը փոփոխելու մասին ներկայացված օրենքի նախագծին առաջարկում եմ անդրադառնալ հուլիս-սեպտեմբեր ամիսների հիդրոօդերևութաբանական պայմանների կանխատեսումների թողարկումից հետո, որը նախատեսվում է շահառուներին տրամադրել հունիսի 26-27-ին:	Պարզաբանում	Հիդրոլոգիական կանխատեսումների տվյալների համաձայն 2018թ. հուլիս ամսվա համար կանխատեսվել էր նորմայից ավել տեղումներ, սակայն 70 տարիների ընթացքում դիտարկված հուլիս ամսվա առավել շոգ 9 տարիների մեջ ներառված է նաև 2017թ.: Միևնույն ժամանակ, ըստ հիդրոլոգիական կանխատեսումների՝ Հրազդան գետի ջրատվությունը (ըստ Հրազդան-Հրազդան և Հրազդան-Լուսակերտ

				ջրաչափական դիտակետերի) 2017թ. կազմել է 10.02 մլն մ^3, իսկ 2018թ. կկազմի 9.1 մլն մ^3 (10% պակաս):
6.1.	ՀՀ բնապահպանության նախարարություն 26.06.2018թ. N 2/13.2/20078	2017 թվականի հուլիսի 6-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> N ՀՕ-116-Ն օրենքով 2017 թվականին Սևանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանվեց մինչև 270 մլն մ^3, ինչպես նաև ամրագրվեց, որ լրացուցիչ ջրբացթողումները չեն խախտի օրենսդրությամբ սահմանված Սևանա լճի ջրի մակարդակի դրական հաշվեկշռի պահպանման պայմանները: <<Հայիիդրոօդերևութաբանական և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն>> ՊՈԱԿ-ի տվյալների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ լրացուցիչ 100 մլն մ^3 ջրբացթողումը հանգեցրել է 2018 թվականի հունվարի 8-ի դրությամբ Սևանա լճի մակարդակի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ լճի մակարդակի 3սմ-ով անկման (08.01.2018թ.-1900.42մ, 08.01.2017թ.-1900.45մ): Նշվածով պայմանավորված՝ լրացուցիչ ջրբացթողումները խախտել են <<Սևանա լճի մասին>> ՀՀ օրենքով և վերոնշյալ օրենքով սահմանված՝ Սևանա լճի ջրի մակարդակի դրական հաշվեկշռի պահպանման պայմանները (09.06.172. N1/05.3/11311 գրությամբ բնապահպանության նախարարությունը վերոնշյալ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրել է բացասական կարծիք և եզրակացություն): Սևանա լճի մակարդակը 2018 թվականի հունիսի 15-ի դրությամբ կազմել է 1900.82մ, որը համեմատած 2017 թվականի նույն օրվա գրանցված ցուցանիշի հետ (1900.91մ) ցածր է 0.09մ-ով: Սևանա լճից ևս 85 մլն մ^3 ջրաքանակ բաց թողելու դեպքում Սևանա լճի մակարդակը կիջնի ևս շուրջ 7 սմ-ով, որն էլ իր հերթին բացասական ազդեցություն կունենա Սևանա լճի էկոհամակարգի վրա, կնպաստի լճի էկոլոգիական վիճակի վատթարացմանը և կհանգեցնի էկոլոգիական մի շարք խնդիրների սրմանը: Հարկ է նշել, որ ներկայացված Նախագծում անդրադարձ չի կատարվել լճի մակարդակի դրական հաշվեկշռի պահպանման պայմաններին: Ելնելով վերոգրյալից բնապահպանության նախարարությունն	*Պարզաբանում.*	Իրավական և բնապահպանական տեսանկյուններից մոտեցումը ընդունելի է, սակայն Նախագծում մշակվել է Սևան-Հրազդան ոռոգման համակարգի դեֆիցիտը մեղմելու համար Սևանա լճից լրացուցիչ ջրբացթողում, քանի որ այլընտրանքային ջրաղբյուր, ինչպես նաև մեխանիկական ջրարտադրության անհրաժեշտ հզորության համակարգերը բացակայում են:

		անթույլատրելի է համարում Սևանա լճից ոռոգման նպատակով բացթողումների 255 մլն մ^3 չափաքանակի սահմանումը: Հաշվի առնելով, որ Նախագծի հիմնավորման համաձայն 2018 թվականը դիտվել է սակավաջուր տարի, ուստի անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ԱԻՆ <<Հայիհիդրոօդերևութաբանական և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն>> ՊՈԱԿ-ի եզրակացությունը՝ տարին սակավաջուր հայտարարելու վերաբերյալ, քանի որ կառավարության հանձնարարությամբ այդ հարցի շուրջ բնապահպանության նախարարի մոտ կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ և մինչ օրս հիդրոօդերևութաբանական գործունեության բնագավառի պետական լիազոր մարմինը չի ներկայացրել տեղեկատվություն տարին սակավաջուր հայտարարելու վերաբերյալ: Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծով հիմնավորված ջրի պակասը պետք է լուծել ոչ թե Սևանա լճից ջրառի մեծացման միջոցով, այլ ջրօգտագործման արդյունավետ համակարգի ստեղծմամբ (ջրամատակարարման համակարգերում հոսակորուստների կրճատում, գետերի վերնագավառներում ջրամբարների կառուցում, ժամանակին ջրամբարներում ջրի ամբարում, Արարատյան դաշտում անցում փականային ռեժիմի, դրենաժային համակարգերի վերականգնում և այլն):		
6.2.	ՀՀ բնապահպանության նախարարություն 25.07.2018թ. N 1/05.2/11465-18	Բնապահպանության նախարարությունը «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ 2018 թվականի հունիսի 26-ի N 2/13.2/20078 գրությամբ ներկայացրել է բացասական կարծիք: Հարկ է նկատել, որ համաձայն նախագծին կցված ամփոփաթերթի, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը դրական չի համարում Սևանա լճից հավելյալ ջրառի իրականացումը, իսկ արտակարգ իրավիճակների նախարարությունը տարին սակավաջուր համարելու համար որևէ հիմնավորում կամ փաստաթուղթ չի ներկայացրել: Ինչպես նաև ջրային տնտեսության կոմիտեի կողմից ընդունելի են եղել իրավական և բնապահպանական տեսանկյունից բնապահպանության նախարարության մոտեցումները: Նախագծի վերաբերյալ բնապահպանության նախարարության	*Պարզաբանում*	Սևան-Հրազդան ոռոգման համակարգի դեֆիցիտի մեղմումը հնավոր է Սևանա լճից լրացուցիչ ջրբացթողումների միջոցով, քանի որ այլընտրանքային ջրաղբյուր, ինչպես նաև մեխանիկական ջրարտադրության անհրաժեշտ հզորության համակարգերը բացակայում են: Լճից մինչև 40 մլն մ^3 ծավալով լրացուցիչ

		դիրքորոշումն անփոփոխ է և մեկ անգամ ևս փաստում է, որ 2017 թվականին Սևանա լճից լրացուցիչ 100 մլն մ^3 ջրբացթողումը հանգեցրել է 2018 թվականի հունվարի 8-ի դրությամբ Սևանա լճի մակարդակի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 3 սմ-ով անկման (08.01.2018թ.-1900.42մ, 08.01.2017թ.-1900.45մ) և դրանով խախտել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Սևանա լճի ջրի մակարդակի դրական հաշվեկշռի պահպանման պահանջը: 2018 թվականի հուլիսի 10-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 5 սմ-ով (10.07.2018թ.-1900.80մ, 10.07.2017թ.-1900.85մ): Սևանա լճի հետ կապված ցանկացած գործողության իրականացման հիմքում պետք է ընկած լինի օրենսդրությամբ սահմանված երեք գլխավոր սկզբունքի պահպանությունը, դրանք են. 1) ռեսուրսի սահմանափակ լինելը, 2) ազգային անվտանգության և ռազմավարական նշանակությունը, 3) էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և պահպանումը: Ջրային կոմիտեի կողմից պարբերաբար հարց է բարձրացվում Սևան-Հրազդան ոռոգման համակարգի դեֆիցիտի առկայության և դրա կարգավորման ուղիների վերաբերյալ: Որպես կանոն, բարձրացված հարցի կարգավորման նպատակով տարիներ շարունակ այլընտրանքային գործող տարբերակներ չեն մշակվում և Սևան-Հրազդան ոռոգման համակարգի դեֆիցիտի մեղմման նպատակով դյուրին մեթոդ է դիտարկվում Սևանա լճից լրացուցիչ ջրբացթողնման իրականացումը: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև ընթացիկ տարում հանրապետության գետերի, մասնավորապես Հրազդան գետի բարձր ջրատվությունը, ջրամբարների բավարար լցվածությունը, հունիս ամսին տեղումների առկայությունը և հուլիս ամսին կանխատեսվող նորմայից ավելի տեղումները, բնապահպանության նախարարությունն անթույլատրելի է համարում Սևանա լճից ոռոգման նպատակով հավելյալ 75 մլն մ^3 ջրբացթողումը և առաջարկում է Սևան-Հրազդան ոռոգման համակարգի ջրի պահանջներն ապահովել ոչ թե Սևանա լճից լրացուցիչ ջուր բացթողնելով, այլ Հրազդան գետի ջրավազանի ջրային ռեսուրսների և Սևանա լճից սահմանված 170 մլն մ^3 ջրբացթողումների տնտեսվար օգտագործման միջոցով (2018 թվականի հուլիսի 10-ի դրությամբ Սևանա լճից բաց թողնված ջրի գումարային ծավալը կազմում է 68.517 մլն մ^3):		նջրբացթողումների համար դրական եզրակացություն է ստացվել ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից:

		Հարկ է նշել, որ «Կանաչ տնտեսություն» գաղափարի հիմքում ընկած է բնապահպանությունը՝ որպես առանցքային, անժխտելի պայման, իսկ տնտեսական և սոցիալական ոլորտները պետք է բխեն բնապահպանական սկզբունքներից ու միտված լինեն բնական շրջակա միջավայրի ու դրա բաղադրիչների պահպանմանը: Մարդածին զանազան ներգործությունների արդյունքում Սևանա լճի էկոհամակարգը հայտնվել է խիստ անկայուն վիճակում, լճի ջրահավաք ավազանում ցանկացած նոր սխալ քայլ կարող է կործանարար լինել այս կարևորագույն բնական օբյեկտի և նրա ռեսուրսների պահպանության համար: Հայաստանը՝ որպես էկոհամակարգային մոտեցումը որդեգրած երկիր, պետք է Սևանա լճին վերաբերվի որպես բնական էկոհամակարգի, այլ ոչ թե որպես ջրամբարի:	*Պարզաբանում*	Ձրային կոմիտեն սկսած 2010թ-ից նախ վարկային միջոցներով, այնուհետև 2017թ-ից բյուջետային միջոցներով իրականացնում է Արփա-Սևան թունելի վթարավտանգ հատվածների վերականգնման աշխատանքներ՝ թունելի թողունակությունը 13 մ^3/վրկ-ից մինչև 19 մ^3/վրկ մեծացնելու նպատակով, որը հնարավորություն կտա ներկայիս 100-130 մլն մ^3 /տարի ջրի ծավալի փոխարեն տարեկան լիճ տեղափոխել մինչև 250 մլն մ^3/տարի ծավալով ջուր:
		Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագիծը մինչ օրս տեղադրված չէ www.e-draft.am կայքում, ինչն օրենսդրական պահանջ է, անհրաժեշտ եմ համարում այն ներկայացնել հանրային քննարկման: Կից ներկայացնում եմ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը:	Ընդունվել է:	Տեղադրվել է Ձրային կոմիտեի www.scws.am պաշտոնական կայքում:

7.1.	ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով 26.06.2018թ. N Փ-17/2018	Սևանա լճի ակտիվ ջրատվության և ջրափոխանակության պայմաններից ելնելով մի շարք գիտահետազոտական ինստիտուտների կողմից հիմնավորվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ օրենքով սահմանվել է, որ Սևանա լճից թույլատրվում է ոռոգման և այլ նպատակներով կատարել 170 մլն մ^3 տարեկան ջրառ առանց խախտելու լճի էկոհամակարգի դրական ցուցանիշները: Սևանա լճից սահմանված 170 մլն մ^3 ավելի լրացուցիչ ջրթողումները, անհրաժեշտության դեպքում սակավաջուր տարիներին թույլատրվում է միայն համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում ՀՀ վարչապետի կողմից ներկայացված որոշման հիման վրա ՀՀ Ազգային ժողովի կողմից կայացած օրենքով: Հաշվի առնելով ընթացիկ տարում հանրապետության գետերի, մասնավորապես Հրազդան գետի բարձր ջրատվությունը, ջրամբարների լցվածությունը, հունիս ամսին տեղումների առկայությունը և հուլիս ամսին կանխատեսվող նորմայից ավելի տեղումները հանձնաժողովը առաջարկում է Սևան-Հրազդան ոռոգման համակարգի ջրի պահանջները ապահովել ոչ թե Սևանա լճից անհիմն կերպով 85 մլն մ^3 լրացուցիչ ջուր բացթողնելով, այլ Հրազդան գետի ջրավազանի ջրային ռեսուրսների և Սևանա լճից սահմանված 170 մլն մ^3 ջրբացթողումների տնտեսվար օգտագործման միջոցով:	*Պարզաբանում.*	Տես՝ ՀՀ բնապահպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների դիտողությունների վերաբերյալ արված պարզաբանումները:
7.2.	ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով 22.07.2018թ. N Փ-18/2018	ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի ս.թ. հուլիսի 20-ի նիստի N 9-փ/18 արձանագրությունից՝ Որոշեցին՝ 1. Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը Սևան-Հրազդան ոռոգման համակարգի ջրի մնացորդային պահանջարկը և ջրաղբյուրների ջրային ռեսուրսների սահմանափակ հնարավորությունը հանձնաժողովը առաջարկում է ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից Սևանա լճից ընթացիկ տարում ոռոգման նպատակով հատկացնել լրացուցիչ մինչև 40 մլն մ^3 ջրթողումներ, իսկ մնացորդայինը ծածկել Մխչյանի պոմպակայանից շուրջ 13 մլն մ^3 և Ռանչպար-Արևշատ ջ/կ-ից 7 մլն մ^3 ջրի հաշվին: 2. Խնդրել բոլոր շահագրգիռ կազմակերպություններին թույլ չտալ տատանումներ ներկայացված առաջարկություններից, հստակ պահպանելով մագիստրալ ջրանցքների գլխամասերում կայուն, առանց տատանումների ջրամատակարարում:	Ընդունվել է:	*Լրամշակվել է:*

8.	ՀՀ արդարադատության նախարարություն 12.07.2018թ. N 02/14/60057-18	Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը:		
9.	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 18.07.2018թ. N 01/09.4/5357-18	Քննության առնելով «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ հայտնում ենք, որ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն առարկություններ և առաջարկություններ չունի:		
		Միաժամանակ, հայտնում ենք, որ 2018 թվականի մարտի 21-ին ընդունվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն ըստ բնագավառների՝ կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, իսկ դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը: Նշված օրենքի ընդունմամբ ուժը կորցրած է ճանաչվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, հետևաբար և դրանից բխող՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման կարգերը սահմանող ՀՀ կառավարության 2009 թվականի № 1159-Ն և № 1237-Ն որոշումները: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ նոր օրենքով նախատեսված կառավարության սահմանած կարգերը դեռևս բացակայում են՝ ներկայացված օրենքի Նախագիծը ենթակա չէ ազդեցության գնահատման:	Ընդունելի է:	
10.	ՀՀ առողջապահության նախարարություն 18.07.2018թ. N ԼՆ/9618-18	Դիտողություններ ու առաջարկություններ չկան: Նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:		
11.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 17.07.2018թ. N ԱԱՄ/ՀՄ-2-2/8875-18	Նախագիծը՝ ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.** բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**		